



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՌԱԴԻՌՈՋՐՈՒՅՑՑԸ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԱՅՐ  
ԱԹՈՌ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ**

(1970 թ. նունիսի 28)

**1) ՀԱՌՑ.**—Մեզ հայտնի է, որ Դուք այցելեցիք Հռոմ՝ կաթոլիկ եկեղեցու Պետին: Այդ մասին գուցե ասելիք կումենայիք:


**ՊԱՏԱՍԽԱՆ.**—Հաճովքով: Երբեք հետևանք հետզհետեւ աճող սերտ հարաբերությունների քրիստոնեական եկեղեցիների միջև և հատկապես վերջին տարիներին հոոմեական-կաթոլիկե եկեղեցու և Հայաստանաց առաքեական եկեղեցու միջև, Մենք պաշտոնական այցելություն տվեցինք Հռոմ՝ Նորին Սրբություն Պողոս Զ Պատին անցազ մայիսի 8–12, շերմագին հյուրասիրությունը վայելելով Սրբազն Քահանայապետի:

Մեր շքախմբին մաս էին կազմում Երրուաղեմի և Կ. Պոլսի հապոց սրբազն պատրիարքները և վեց արքապիսկոպոսներ և եպիսկոպոսներ:

Հոոմում հոգեկան մսիթարության մեծ պահեք ապրեցինք Սրբազն Պապի հետ աղոթելով և Պետրոս Առաքյալի գերեզմանի և հոյակերտ տաճարների սուրբ սեղանների առջև վասն ամրապնդման քրիստոնեական տիեզերական եղբայրության, վասն առավել սերտ միության մեր եկեղեցիների Քրիստոսի սիրուցն մեջ և վասն պատրազմների վերացման ու աշխարհի խաղաղության:

Մյու ոգով, Սրբազն Քահանայապետի հետ ստորագրեցինք նաև մի հաղորդագրություն մայիսի 12-ին:

Կկամենայինք Ձեզ կարդալ այդ հաղորդագրության վերջին պարերությունը, որ մի կոչ է՝ ուղղված պետության ղեկավարներին՝ «Հանուն եղբայրության Պողոս Զ Պապը և Վազգեն Ա կաթողիկոսը բարձրացնում են իրենց ձաւնը մի հանդիսավոր կոչի մեջ՝ ուղղված բոլոր նրանց, որոնք ազդեցություն ունեն ազգերի և ժողովուրդների կյանքի վրա, այն նպատակով, որ նրանք շանան փնտուել և գտնել հնարավոր բոլոր միջոցները՝ վերջ տալու պատե-



ՀՈԽՈՒՄ. Ս. ՊԵՏՐՈՒՍ ՄԱՅԵՐ ՏԱՅԱՐԸ

րազմներին, ատելությանը, ֆիզիկական և բարույական բռնությանը, մարդու կողմից մարդու հանդես կատարվող ամեն մի ճշշման: Նա, որ մեր հաղադությունն է, թող այնպես անի, որ այս կոչը լինի լինի»:

Մենք պարտք ենք համարում նաև այս պահին Մեր վկայությունը բերելու այն մասին, որ Պողոս Զ Սրբազնա Պապը հոգևոր սրբանելի մի անձնավորություն է, մի սիրու, սիրով ու լուսով լեցուն, և բարի բարեկամը մեր եկեղեցու և մեր ծողովորի: Մենք միշտ պիտի հիշենք նրան եղբայրական հարգալիր և ամենաջերմ գգացումներով: Եվ չաետք է մոռանանք մանավանդ բաժանումի հոգումնալից պահը, եթե նորին Սրբությունը, իբրև գերագույն արտահայտություն դեպի Հայութանայց եկեղեցին ունեցած իր սիրո և գնահատանքի. Մեզ հանձնեց հայոց Առաքյալ՝ սուրբ Բարթողիմեոսի մեկ մասունքը, որը շերմագին գորգուրանքով պիտի պահենք ու. Էջմիածնի տաճարում, նույն Առաքյալից մեր ունեցած մյուս մասունքների հետ միատեղ:

Թող Աստված անսասան պահի մեր սուրբ եկեղեցին և օգնի Մեզ, որ պեսզի լիությամբ մեր աշխատանքի բաժինը բերենք՝ եկեղեցիների առավել մերձեցման և գործակցության նվիրական ճանապարհի վրա:

2) ՀԱՐՑ.—Ձերդ Սրբություն, Խոտայիսում ուրիշ այցելություններ ել տվեցի՞ք:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**—Այո, անշուշտ: Հոռոմից ուղղակի ուղևորվեցինք դեպի Վենետիկ և այցելություն տվեցինք ու. Ղազարի Մխիթարյան ուխտին, սիրալիր հրավերով Գերապայծառ Արքանոր: Ս. Ղազարում մնացինք երեք օրեր, տեղավես շրջապատված Մխիթարյան հայրերի անհուն սիրով և հարգանքով: Աննոռանալի պահեր ապրեցինք մանավանդ նախագահելով երշանկահիշատակ հայր Ղևոնդ Ալիշանի սենյակ-թանգարանի և նոր ծեռագրատան բացման հանդիսություններին, ինչպես և Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի ուսանողության հանդեսին: Մի անգամ ևս Մենք խորապես մխիթարվեցինք հաստատելով, զգալով, թե ինչպիսի կենդանի հավատքով ու ապրումով Մխիթարյան հայրերը իրենց հոգու աշքերը սևեռել են դեպի վերածնված Մայր Հայաստանը և դեպի ծաղկող ու աճող հայրենի գիտությունն ու մշակույթը:

Այցելեցինք նաև Միլանի հայ համայնքին, ու. Զգոն եպիսկոպոսի և վարչության նախագահ տիհար Ստեփան Սրապյանի հրավերով, Մեր օրինությունը բաշխելով մեր բոլոր հավատացյալ զավակներին: Միլանի համայնքը թեև փոքր է, սակայն իր կազմակերպված վիճակով և իր հոգևոր-ազգային պայծառ նկարագրով «գոհար» մի գաղութ կարող ենք նկատել սիյուռի տարածքի վրա:

3) ՀԱՐՑ.—Մամուլից տեղեկացանք, որ Դուք եղել եք մեր կարևոր գաղութներից մեկում ֆրանսահայ գաղութում: Ի՞նչ տպավորություններով վերադարձաք:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**—Ծատ հաճելի է Մեր պատասխանել Ձեր այս հարցին:

Իրոք, Ֆրանսիան հանդիսանում է այն երկրներից մեկը, որ կազմակորչած է սիյուռի ամենաբազմամարդ գաղութներից մեկը, շուրջ երկու հարյուր հազար հայերով: Սիրալիր հրավերով Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հոգևոր առաջնորդ Սերովիք արքեպիսկոպոսի, մոտ մեկ ամավա ժամանակաշրջանում այցելեցինք Փարիզի, Լիոնի, Վալանսի, Դեսինի, Մարսելի, Մոնակոյի, Նիսի և Ալֆորվիլի հայ եկեղեցիներն

ու համայնքները: Ամենուրեք տեղի ունեցան նկեղեցական արարողություններ, բազմամարդ համաժողովրդական համելիսություններ, բազմաթիվ հանդիպումներ և այցելություններ: Այս բոլոր առիջներով Մեզ համար անփոխարինելի միսիթարություն եղավ բաշխել բոլորին անհատիր օրինություններ Մայր Աթոռ և Հջմանական կայսերական պալատում: Վարչական գործությունները վերածնված մեր մայր հայրենիքից: Գոյցե Դուք չեք կարող երևակայել, թե ինչպիսի խոր հոգովաներով, ինչպիսի հայրենաբաղդ ապրումներով և որախության արցունքներով իրենց պրտերը լայն էին բացում Ֆրանսիայի հազար-հազար հայերը ընդունելու համար այդ օրինականություններն ու ողջովաները:

Բացի նկեղեցական կազմակերպություններից, Ֆրանսիայի բոլոր վերոհիշյալ քաղաքներում գործում են բազմաթիվ մշակութային, բարեսիրական, մարզական և այլ ազգային միություններ, որոնք աշխատում են, որպեսզի նոր սերունդները վար պահեն իրենց սրտերում հայության ոգին և հայրենաբաղդ զգացումը:

Ծառ վայրերում, նկեղեցու կողքին և նրա հովանու ներքև գործում են հայ մեկօրյա վարժարաններ՝ բազմահարյուր աշակերտներով: Այսպիսի մյր վարժարանի բացումը կատարեցինք Մենք Վալանս քաղաքում: Փարիզում լուս նն տեսում երեք հայերեն թերթեր և երկու ֆրանսերեն պարբերաթերթեր:

Սրտի անհուն գոհունակությամբ Փարիզի մոտ Ալֆորիլի քաղաքում հունիսի 13-ին բացումը կատարեցինք Կոմիտաս վարդապետի անվան փողոցի, քաղաքապետի և բազմահարյուր հայ և ֆրանսիացի քաղաքացիների ներկայությամբ, իսկ Մարսելում մայիսի 31-ին, հայոց նկեղեցու բակում, հիմնաբարը օրինեցինք մի հուշարձանի, որը նվիրվելու է հիտուրական գրավման շրջանում զոհված հայ գիտունների և պարտիզանների հիշատակին:

Բոլոր վերոհիշյալ քաղաքներում, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, եղան պաշտոնական ընդունելություններ, կազմակերպված տեղի նահանգապետների և քաղաքապետների կողմից: Հանդիսավոր իրադրությանց մեջ փոխանակվեցին ճառեր: Այս ընդունելությանց ամենահիշարժանը պետք է նկատել անշուշտ մայիսի 20-ին Մեր հանդիպումը Ֆրանսիայի համբառետության նախագահ մեծարգության ժամանակակից հայ նկեղեցու և հայ ժողովրդի մասին, իր գնահատանքը հայտնելով Ֆրանսիայում ապրող հայերի նկատմամբ, որոնք իբրև նաև նաև հայատարին քաղաքացիների իրենց նպաստն են քերում երկրի տնտեսական և մշակութային վերելքին:

Անդրադառնալով խաղաղ գոյակցության գաղափարին, որին ակնարկել էինք Մեր խոսքի ընթացքում, մեծարգության նախագահը հայտնեց իր խոր ու վճռական համոզումը, թե բոլոր պետությունների դեկալարները անկախ այլ և այլ հանգամանքներից, պարտավոր են ձեռք-ձեռքի տալ՝ խափանելու համար պատերազմները և ապահովելու համար համայն աշխարհի խաղաղությունը:

Բացադիկ որախություն պատճառեց Մեզ հանդիսավոր ընդունելությունը, որը կազմակերպեց Մարսելի քաղաքապետ Կապտոն Տըֆերը մայիսի 30-ին, երբ ի ներկայության պաշտոնական անձնավորությունների և հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչների, Մեզ նվիրեց վերջերս կատարված պեղումներից հայտնաբերված մի քարե տախտակ Ամատերդամի հայոց նկեղեցու հայերեն արձանագրությամբ, Ուկան վարդապետի ժամանակաշրջանից:

Ֆրանսիայում կատարած Մեր ուղևորության ընթացքում վերոհիշյալ բո-

լոր վայրերում եղբայրական ամենաջերս հանդիպումներ ունեցանք կաթողիկէն եկեղեցու բարձրաստիճան Աերկայացուցիչների, սրբազն կարդինալների և արքեայիսկոպոսների հետ, որոնք կազմակերպեցին հանդիսավոր միատեղ աղոթքի արարողություններ պատմական փառավոր տաճարներում, ընդունելություններ և ճաշկերություններ: Բացադրի հանդիսավորությամբ տեղի ունեցավ նման մի արարողություն և միատեղ աղոթք Փարիզի ճաշակոր «Աստվածամոր» տաճարում հունիսի 13-ի երեկոյան, բազմահազար ֆրանսիացիների և հայերի ներկայությամբ: Փոխանակվեցին ճառեր Ամենայն Հայոց Հայրապետի և կարդինալ Մարտիի միջև:

Ինչպես տեսնում եք, Մեր տպավորությունները և հիշատակները, որով վերադառնում ենք Ֆրանսիայից, իրապես սքանչելի ու ոգևորիչ են:

**4) ՀԱՐՑ.—Զերդ Սուրբ Օծություն, իմացանք, որ Դուք այցելել եք Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնը՝ Լիսարոն: Մի քանի խոսք չէի՞ք հաճի ասել այդ մասին:**

**ՊԱՏՍԱԽՆԱՆ.—Երբ գտնվում էինք Ֆրանսիայում, սիրով ընդունեցինք հրավերը Լիսարոնի Գալուստ Կյուլպենկյան մեծ հիմնարկության նախագահ դոկտ. Ազերեդո Պետրիգանի և այցելություն տվեցինք հունիսի 8—11: Գտանք շատ ջերմ ընդունելություն, թե՛ Կյուլպենկյան հիմնարկության և թե՛ տեղի պետական իշխանությանց կողմից: Հանդիսավոր իրադրության մեջ, այցելեցինք Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նորակառուց կենտրոնը, որը հոյակերտ և բարձր ճաշակով հորինված մի շինուազուն է: Այս առթիվ փոխանակվեցին ճառեր, և Մենք Մեր գոհունակությունը և շնորհակալությունը հայտնեցինք այս բարեսիրական մեծ հաստատության նյութական կարևոր հատկացումների համար, ի նպաստ հայ ժողովրդի:**

Այստեղ ևս Մենք բարեկամական հանդիպումներ ունեցանք Պորտո-գալիայի մեծարգու նախագահի և Վարչապետի հետ, սիրալիր ջերմ մթնոլորտում: Երջանիկ եղանք այցելություն տալով հայտնի ուստատեղի «Ֆաթիմա» սրբավայրին, որտեղ ողջագուրվեցինք Պորտոգալիայի Սրբազն Պատրիարքի և պապական նվիրակի հետ, միատեղ աղոթելով տեղի Մայր տաճարում, բազմաթիվ ուստավոր հավատացյալների ներկայությամբ:

**5) ՀԱՐՑ.—Վեհափառ Հայրապետ, ի՞նչ կկամնայիք հաղորդել մեր ունկնդիրներին իրեն եզրափակում:**

**ՊԱՏՍԱԽՆԱՆ.—Վերադառնալով Հոռիմց, Մեզ հետ ենք բերել լավագույն և անմոռանալի հիշատակներ: Մեր սրտում միշտ պահելու ենք ջերմությունը և. Ս. Պողոս Զ Պապի պայծառ Հոգու: Հավատում ենք, որ եկեղեցիների է՛լ ավելի մերձեցումը և գործակցությունը աստվածային պատգամն է ուղղված մեզ բոլորին, որին պետք է հետևնենք մեր հոգևոր առաքելության գիտակցության լիությամբ:**

Թող Տերը անշարժ պահի Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին և համայն ժողովուրդը հայոց, այժմ և հավիտյան: Ամեն:

